

«ԺԵ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ»-Ի Ա ՀԱՏՈՐԸ

Հաջորդաբար լույս են տեսնում Հայկական ՍՍՌԻ ԳԱ Պատմության ինստիտուտի «նյութեր հայ ժողովրդի պատմության» մատենաշարի նոր, արժեքավոր ժողովածուներ¹։ 1955 թ. ընթացքում լույս տեսավ Լ. Խաչիկյանի կազմած «ԺԵ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ» ժողովածուի Ա մասը, որն ընդգրկում է 1401—1450 թվականները։ Ինչպես գիտենք, ընկ. Լ. Խաչիկյանը 1950 թ. առանձին հատորով լույս է ընծայել ԺԴ դարի Հիշատակարանները։ Ներկա հատորը փաստորեն այդ նույն գործի շարունակությունն է հանդիսանում։

Պետք է ասել, սակայն, որ ԺԵ դարի Հիշատակարանները թե՛ քանակով, թե՛ ծավալով ու ընդգրկող նյութի հարստությամբ, մեծ չափով գերազանցում են ինչպես ԺԴ, այնպես էլ նրան նախորդող դարերի Հիշատակարաններին։ Եթե «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» հատորը ընդգրկում է ընդամենը 845 մեծ ու փոքր հիշատակարան, 659 էջ (41 տպ. մամուլ) ծավալով, ապա ԺԵ դարի միայն առաջին կեսի հիշատակարանների գրախոսվող հատորն ունի նույն ծավալը և պարունակում է 744 հիշատակարան։ Հրապարակի վրա է հանգուցյալ Գարեգին Ա. կաթողիկոս Հովսեփյանի աշխատասիրությամբ 1951 թ. Անթիլիասում լույս տեսած «Յիշատակարանք ձեռագրաց» շորս հատորանոց ժողովածուի Ա հատորը, որի մեջ ամփոփված են Ե դարից մինչև 1250 թ. առկա համարյա թե բոլոր հիշատակարանները՝ թվով 472 հատ։

Անշուշտ համեմատաբար ավելի վաղ շրջանի վերաբերող հիշատակարանների սահմանափակ քանակը առաջին հերթին պետք է բացատրել այն բանով, որ այդ ժամանակներից ավելի քիչ թվով ձեռագիր մատյաններ են հասել մեզ։ Սակայն ԺԵ դարի հիշատակարանների առատությունը և հատկապես նրանց բովանդակության հարստությունը սխալ կլինեք բացատրել միայն ձեռագրերի առատությամբ։ Մեզ հասած ձեռագիր մատյանների համեմատաբար մեծ թիվը ինքնին վկայում է այն մասին, որ ԺԵ դարում ձեռագրերի ընդօրինակման գործը բավական լայն չափեր էր ընդունել։ Եվ դա պատահական չէր։ Դեռևս ԺԴ դարում հիմնված կուլտուրական խոշոր կենտրոններից շատերը շարունակում էին գոյություն ունենալ և գործել նաև ԺԵ դարի առաջին կեսում։ Հայաստանի տարբեր շրջաններում իրենց բուռն կրթական գործունեություն էին ծավալել այդ դպրոցներից դուրս եկած բազմաթիվ անվանի գործիչներ, որոնք նոր

¹ 1948—1956 թթ. ընթացքում լույս են տեսել հետևյալ սկզբնաղբյուրները՝

ա) Крестьянское движение в Армении в XIX веке, сост. В. Рштуни при участии К. Степаняна, Ереван, 1948.

բ) ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950.

գ) Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հատ. I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951.

դ) Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX века, (Сборник документов), сост. проф. В. Рштуни при участии К. Степаняна, Ереван, 1951.

ե) Армяно-русские отношения в XVII веке, Сборник документов. Подготовили к печати В. А. Парсамян, В. К. Восканян, С. А. Тер-Авакимова, под редакцией проф. В. А. Парсамяна, Ереван, 1953.

զ) ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա. (1401—1450 թթ.), կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955.

է) Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հատ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956.

թափով շարունակում էին զարգացնել վանական դպրությունն ու դպրոցական գործը, ժն դարի ընթացքում մեծ թվով ձեռագրեր են գրվել և արտագրվել ինչպես Հայաստանի ամենահեռավոր անկյուններում, այնպես նաև հայ գաղթաշխարհի կարևոր կենտրոններում:

Ինչպես գիտենք, կուլտուրական կյանքում նկատվող այս աշխուժությունը երկար շարունակվեց: Երկրում տեղի ունեցող քաղաքական վայրիվերումների, քոչվոր տիրակալների, միջևանքնդհատ կրկնվող միջֆեոդալական ընդհարումների, ասպատակությունների և հարստահարության պայմաններում տևական կուլտուրական զարգացման մասին խոսք լինել չէր կարող: Եվ իրոք, եթե ժն դարը տվեց միայն մի Թովմա Մեծոփեցի, որն իր հիշատակարաններից բացի թողեց նաև ժն դարի սկզբի համառոտ պատմությունը, ապա ամբողջ ժՁ դարի ընթացքում չգտնվեց մեկը, որպեսզի գրի առնեք տառապյալ ժողովրդի կոտորածների, գերեվարության, սարսափի ու սիստեմատիկ կոտորակման մոռյլ տարեգրությունը: Հրապարակի վրա կան միայն մի քանի համառոտ ժամանակագրություններ, ուրոնք շատ կցկտուր կերպով են անդրադառնում ժՁ դարի անցքերին: ԺՁ դարի հիշատակարանները նույնպես անհամեմատ աղքատ են ժն դարից:

Ժն դարի ձեռագրերի քազմաթիվ և երբեմն քավական ընդարձակ հիշատակարանների փառտական հարուստ նյութը գալիս է մասամբ մեղմելու այս շրջանի պատմության ուսումնասիրությանը գրաղվողների համար ստեղծված դժվարին վիճակը, որն հետևանք է հայ պատմագրության քնազավտում հիշյալ ժամանակաշրջանում նկատվող ամլության: Ուստի և որքան էլ հարուստ լինեն նրանք ու քանակով շատ, այդուհանդերձ հիշատակարանների ամեն մի տողն անգամ թանկ է մեզ համար և արժանի ուշադրության ու հրատարակման:

Թե որքան կարևոր նշանակություն ունեն ժն դարի հիշատակարանները նույն ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմության սիստեմատիկ շարադրանքը տալու համար, այդ երևում է հենց ժողովածուին կցված ընդարձակ առաջաքանից, որտեղ առաջին անգամը լինելով շարադրված է ժն դարի առաջին կեսի պատմությունը՝ անհրաժեշտ նյութերը մեծ մասամբ քաղելով հրատարակվող հիշատակարաններից: Պետք է ասել, որ այս առաջաքանը առ այսօր փաստորեն հանդիսանում է միակ աշխատությունը, որտեղ փորձ է արված ի մի բերել առկա բոլոր նյութերը և տալ այդ ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական և կուլտուրական կյանքի համեմատաքար մանրամասն պատմությունը:

Դարերի ընթացքում մշակված և տրադիցիոն կերպով կրկնվող հիշատակարանների շարադրման ձևը, ըստ որի ձեռագրի ընդօրինակող գրիչը հիշատակում է ընդօրինակման ժամանակը, վայրը, պատվիրատուի, ստացողի և ձեռագրի գրման ու ծաղկման գործի հետ անմիջապես առնչություն ունեցող անձնավորությունների անունները, ընդհանրապես կաշկանդել է գրիչներին և պատճառ դարձել հիշատակարանների միօրինակ քղվանդակությանը: Բայց և այնպես քիչ չեն եղել նաև դրագետ և անվանի գրիչներ, որոնք չեն վարանել խախտելու ընդունված շարլոնը և ևամ այդ իսկ սիստեմով հիշատակագրելիս, առանձին դեպքերում, և հատկապես գրչության ժամանակն ու հանգամանքները նկարագրելիս, ընդարձակարանել են և թողել շափազանց արժեքավոր մանրամասնություններ, այդպիսով անգնահատելի ծառայություն մատուցելով հետագա սերունդներին:

Հիշատակարաններում քավական արժեքավոր տվյալներ կան ժն դարի առաջին կեսի, ինչպես քաղաքական անցուդարձերի, այնպես նաև ժամանակի պետական, եկեղեցական և հասարակական գործիչների մասին: Հիշատակարանների տվյալներով ճշտվում են նաև լանգ-Բեմուրի արշավանքների, Կարա-Կոյունլու, Ամիր Յուսուֆի, նրա որդու՝ Իսքանդարի և սրա եղբոր՝ Ջհանշահի իշխանության ժամանակաշրջանի վիճելի թվականները, և որոշ մանրամասնություններից հնարավոր է դառնում մոտավոր կռահումներ անել առանձին իշխանավորների վարած ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ:

1441—1443 թթ. հիշատակարանների մեջ հետաքրքիր տեղեկություններ կան նաև կաթողիկոսական աթոռի Սսից էջմիածին տեղափոխելու և դրան հաջորդող իրադարձությունների մասին (էջ 522, 531—532, 536, 538 և այլն):

Մեզ համար առանձնապես կարևոր են այն, թիև շափազանց ժլատ, տեղեկությունները, որ հաղորդում են հրապարակվող հիշատակարանները, Հայաստանի տարբեր մասերում դեռևս իրենց գոյությունը պահպանած հայ ֆեոդալական տների վերջին շառավիղների և նրանց վայելած իշխանական իրավունքների վերաբերյալ: Չափազանց հետաքրքիր է ևրուսաղեմի Մատենադարանի

№ 1617 ձեռագրի մեջ պահպանված և Համշենի հայ իշխան պարոն Դավթին հասցեագրված գրությունը (լջ 345)։

Հայտնի է, որ Համշենի հայկական իշխանության մասին մինչ այժմ մեր ունեցած տեղեկությունները սահմանափակվում էին միայն Կլավիխոյի ուղեգրության տվյալներով, որոնք վերաբերում են 1406 թվականին Այնինչ, ըստ հիշյալ գրության և նույն ձեռագրում պահպանված հիշատակարանի (լջ 344), 1425 թվականին Համշենում իշխել է պարոն Դավթը, որն ամենայն հավանականությամբ Կլավիխոյի մոտ հիշված պարոն Առաքելի որդին պետք է լինի։ Այստեղ նույնպես, ինչպես Կլավիխոյի մոտ, կարևոր տեղեկություններ կան Համշենի սահմաններում երթևեկող վաճառականներից և փոխադրվող ապրանքներից գանձվող մաքսի մասին։

Ուշագրության արժանի են նաև հիշատակարանների հաղորդած տեղեկությունները երկրում ծավալվող կուլտուրական շինարարության, կրթական գործի և դպրոցական կյանքի, ինչպես նաև առանձին գրական-կրթական գործիչների վերաբերյալ։ Բանասիրության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում հիշատակարանների մեջ պահպանված՝ Գրիգոր Տաթևացու, Խովմա Մեծոփեցու, Մատթեոս Զուղայեցու, Առաքել Սյունեցու, Գրիգոր Խլաթեցու և մեծ ու փոքր այլ գործիչների կենսագրական տվյալներն ու նրանց գիտական-հասարակական գործունեության կարևոր մանրամասնությունները, դրված երբեմն այդ գործիչների, իսկ շատ հաճախ նրանց մերձավոր աշակերտների ձեռքով։

Այս մանրամասնությունների մեջ է, որ հիշատակվում են առանձին հեղինակների կարևոր աշխատությունները, որոնցից դիտարկենք ցուցակը (շուրջ բառն անուն)։ մեջ է բերված ժողովածուի առաջարանում (լջ XL—XL—1)։

Այս հատորում զգալի տեղ են գրավում նաև չափածո հիշատակարանները։ Առավել արժեքավորներից է Գրիգոր Մերենց Խլաթեցու հայտնի «Յիշատակարան Աղլտից»-ը, որը առաջին անգամը լինելով, լույս է տեսնում ամբողջությամբ չորս տարբեր ձեռագրերի ու հրատարակված տարբերակների բարեխիղճ համեմատությամբ (լջ 272—286)։ Բանասիրության համար գիտական հետաքրքրություն է ներկայացնում նույն հեղինակի «Պատմութիւն արշաւանաց և ասպատակութեանց զարաց Լանկ-Թամուրի, ի Գրիգորէ Խլաթեցոյ» խորագիրը կրող չափածո ստեղծագործությունը (լջ 286—288), որը պարունակում է այնպիսի մանրամասնություններ, որոնց մասին լուր է «Յիշատակարան Աղլտից»-ը։

Ժժ դարի սկզբի քաղաքական անցուղարձերի մասին հետաքրքիր մանրամասնություններ են պարունակում նաև Առաքել Սյունեցու «Աղամագրբի» 1403 թ. և Խիզանում ընդօրինակված «Յայսմատուրբի» 1407 թ. Հովհաննես գրչի չափածո հիշատակարանները (լջ 34—37 և 68—71)։ Ուշագրության արժանի է նաև Գրիգոր Խլաթեցու աշակերտներից՝ Առաքել Բաղիշեցու չափածո ողբը, նվիրված իր ուսուցչի եղբրական մահվան նկարագրությանը (լջ 329—333)։ Խլաթեցին նահատակվեց 1425 թ. Խառաբաստի կամ Ցիպնա վանքում Բաղիշի քրդական Ռոժակ ցեղի հրոսակների ձեռքով։

Հիշատակարաններում ավելի սակավ են հանդիպում տվյալներ երկրի տնտեսական կյանքի՝ առևտրի, վաճառականության, արհեստների և այլնի վերաբերյալ։ Հողային հարաբերությունների մասին մասնակի տեղեկություններ կարելի է գտնել միայն վանական տնտեսությունների նկարագրությունների և հավատացյալների կողմից վանքերին ու եկեղեցիներին կատարված նվիրատվությունների մասին վկայող հիշատակությունների մեջ։ Սակայն դրանք մեծ մասամբ վերաբերում են վանական՝ «վակֆային» հողատիրություններ, ժժ դարում մեծ տարածում ստացած ֆեոդալական խոշոր հողատիրական ինստիտուտներ՝ «սոյուրդալի», ինչպես նաև «իկթայի» կամ «իկթա-յե թամիթի» մասին ոչ մի հիշատակության չենք հանդիպում։ Մուլքի մասին ևղած տվյալները վերաբերում են նույնպես վանքերի կողմից ձեռք բերված «գանձագին» կամ «արծալագին» մուլքերին (լջ 565, 581, 582)։ Մուլքային ժառանգական խոշոր հողատիրության վերաբերյալ նույնպես ոչ մի հիշատակություն չկա։

Ինչպես ասվեց, կցկտուր են նաև տեղեկությունները քաղաքային կյանքի, առևտրի և արհեստավորության վերաբերյալ։ Սակայն եթե ի նկատի ունենանք, որ դեռևս ժժ դարում Հայաստանի խոշոր և վաճառաշահ քաղաքներից շատերը, որոնք գտնվում էին միջազգային տարանցիկ առևտրի գլխավոր ճանապարհների վրա, մոնղոլական տիրապետության շրջանում քայքայվեցին և որպես առևտրի և արհեստավորության կենտրոններ, հետզհետե կորցրին իրենց արժեքը, ապա այդ հատ ու կենտ և համառոտ հիշատակություններն ու աղբատիկ տվյալները (լջ 136, 167, 237, 344, 510 և այլն) ավելի քան մեծ նշանակություն են ստանում և կարող են

դիտվել որպես տվյալ ռամանակաշրջանի և նրան հաջորդող դարերի հայ արհեստավորության և առևտրական դասի պատմության համար կարևոր փաստաթղթեր:

Բայց եթե ընդհանրապես վերցրած կարելի է ասել, որ արհեստավորության վերաբերյալ տեղեկությունները կցկտուր են ու համառոտ, ապա արհեստավորական դասի մեջ իրենց առերևույթ համեստ, սակայն շատ կարևոր տեղ գրավող ձեռագրերի քրտնաջան արտագրողների, գրիչների և ծաղկողների սոցիալական վիճակի և աշխատանքի պայմանների մասին հիշատակարանները բավական հարուստ նյութ են պարունակում: Շնորհիվ այդ հիշատակությունների, մենք մանրամասն ծանոթանում ենք ինչպես առհասարակ գրչության և ձեռագրերի ընդօրինակման արվեստին, այնպես նաև հայ մատենագրության անձնվեր աշխատավորների հերոսական ստեղծագործական աշխատանքին, ճանաչում ենք նրանց և արձանագրում նորանոր անուններ, որոնք գալիս են հարստացնելու հայ կուլտուրայի անխոնջ մշակների՝ բազմարդյուն գրիչների ու ծաղկողների առանց այն էլ բավական պատկառելի ցանկը:

Որքան բնորոշ են Զաքարիա գրչի հետևյալ խոսքերը, որ նա գրել է իր ուսուցիչ՝ Հովհաննես գրչի մասին:

«Եւ արդ, գրեալ եղև Յոհան գլուխն ձեռամբ վարդապետին իմոյ տէր Յոհանիսի Մանգասարենց, քաջ քարտողին, որ ՀՔ(72) տարի՝ ամառն և ձմեռն, գիշերն ու ցերեկ ի գրել եկաց: Որ գրեալ եղև ձեռամբ նորա Խ(40) Այսմաուրք և Տարենգիրք, իսկ փոքր գիրք՝ Տետր և Լեղծթամատոյց, Շարակնոց և Սաղմոսարան, Մաշտոց և Գանձատետր Մ(50) — Կ(60) և այլ աւելի, և Աւետարանս ԼՔ(32): Եւ զայս Յոհան գլուխս ի ծերութեան ժամանակիս, որ աշք չէր հայիլ և ձեռքն կու գողայր, բաղում շարչարանօք հագիւ կարաց աւարտել, և այլ չկարաց գրիչ բռնել մինչ ի վախճան, որ հանգեաւ ի Քրիստոս ԶԶ(86) ամաց» (էջ 587):

Կարևոր են նաև տեղեկությունները երաշտի, մորեխի, սովի, թանկության, համաճարակների (մահտարածամ) և այլ բնական աղետների վերաբերյալ: Հատկապես ուշագրության արժանի են ապրանքների գների մասին եղած հատուկենտ տվյալները, որոնց շնորհիվ հնարավոր է մոտավոր պատկերացում կազմել բնակչության տնտեսական վիճակի և նյութական բարեկեցության մասին:

Հիշատակարանների մեջ մեծ չափով արտացոլված են նաև ժամանակի սոցիալ-տնտեսական, հարկային, վարչական և այլ կարգի տերմիններ, որոնցից շատերը արարա-պարսկական տերմինների հայերեն համանիշներն են և այս տեսակետից էլ արժանի են հատուկ ուշագրության: Այդպիսի տերմիններից են, օրինակ, «հաւատի գին» (չիզյա), «թագավորական հարկ» կամ «դեմոսական հարկ» (հոկուկ-ե դիվանի), «կողմնապետ» (ամիրթուման կամ բեկլարբեկ), «տեղապահ» (նայիր), «գավառապետ» (հաքիմ), «հազարապետ» (մինրաշի), «սեպուհ» (աայան, աշրաֆ), «տանուտեր» (քյադխուդա), «վերակացու» (մուրաշիր) և այլն և այլն:

Շնորհիվ այն բանի, որ ձեռագրերի պատմության կապակցությամբ, հիշված են բազմաթիվ հայտնի և անհայտ անձնավորությունների անուններ, որոնց կցված են նաև նրանց սոցիալական դիրքին հատուկ տիտղոսներ և պաշտոնների անուններ, ուստի հիշատակարանների բնագրերի մեջ մեծ թիվ են կազմում հատկապես սոցիալական տերմինները:

Ավելորդ չենք համարում այստեղ նշել, որ ընկ. Լ. Խաչիկյանը մեծ և կարևոր աշխատանք է կատարել կազմելով ինչպես տեղանունների, այնպես նաև առարկայական ցանկեր, որոնք զգալի չափով հեշտացնում են հիշատակարանների օգտագործումը: Դեռ ավելին, անձնանունների ու աշխարհագրական անունների ցանկը հարստացված է յուրաքանչյուր անվանը հաջորդող համառոտ բացատրություններով, որոնց շնորհիվ այս ցանկերը նաև բառարանների գեր են կատարում և գիտական մեծ արժեք ին ստանում: Լավ կլիներ սակայն, որ նույն սկզբունքով կազմվեին նաև առարկայական ցանկերը, և հարկային, սոցիալական, վարչական և այլ տերմիններին ևս տրվեին համառոտ բացատրություններ, որով «ցանկեր»-ի այս սովոր մասը (150 էջ) ավելի քան անթերի կդառնար:

Այսպիսի բացատրություններ տրված են միայն «տար տերմիններին», որոնք առանձնացված են «օտար բառեր»-ի բառարանում (էջ 814): Այս առանձնացումը պատճառ է դարձել, որ մի շարք կարևոր սոցիալ-տնտեսական տերմիններ դուրս են մնացել առարկայական ցանկից, ինչպես «ողֆ» կամ «ոխվ» (վակֆ), «մուլք», «թարխան անել», «խաս անել», «ղապալա», «թաման», «դանուշման», «ղատի» և այլն, և փոխարենը այնպիսի տերմիններ, որոնք տեղ են գտել առարկայական ցանկի համապատասխան բաժիններում, ինչպես ասվեց, մնացել են առանց բացատրության (տես «աթափագ», «ամիրա», «ամիրդա», «խան», «մելիք», «նայիպ», «ռայիս»,

«չազայ» (չիզյա), «թանկա», «մտխալ» և այլն)։ Իսկ օտար բառերի բառարանից դուրս են մնացել՝ «սըլիս» (արար.) — զենք (էջ 276), «էմնություն» (արար.) — ապահովություն (էջ 280), «քամ» (պրսկ.) — սակավ (էջ 324) և հատուկենտ նման, մեծ մասամբ հանրահայտ, բառեր։

Մի քանի խոսք հիշատակարանների հրատարակման գիտական սկզբունքի մասին։

Պետք է նշել, որ ներկայումս հնարավոր չէ տալ որևէ ժամանակաշրջանի հայերեն բոլոր ձևազրեքի հիշատակարանների լիակատար ժողովածուն։ Մի կողմ թողած այն փաստը, որ շատ ձևազրեք դեռևս գտնվում են մասնավոր անձանց ձեռքում, մեծ թվով ձեռագրեր կան կենտրոնացված արտասահմանյան երկրների թանգարաններում ու ձեռագրատներում, որոնք մատչելի չեն մեզ։ Հիշյալ ձեռագրերի շատ շնչին մասն է նկարագրված լույս տեսած ձեռագրացուցակներում։ Այսպես, Երուսաղեմի Մատենադարանի 4000 հայերեն ձեռագրերից նկարագրված են ընդամենը 383 ձեռագիր¹, Վենետիկի շուրջ 3500 ձեռագրերից նկարագրված են 319-ը², Վիեննայի մոտ 1000 ձեռագրերից՝ 573-ը³, իսկ Սպահանի ս. Ամենափրկչի վանքի 1000-ի շափ ձեռագրերի հրատարակված ցուցակներ չկան։ Մենք այստեղ ի նկատի ունենք այն ձեռագրերը, որոնք գտնվում են արտասահմանի հայության և հայ ազգային-եկեղեցական հաստատությունների ձեռքում, մինչդեռ թեև անհամեմատ փոքր թվով, սակայն եվրոպական զանազան խոշոր թանգարանային հաստատություններում ևս պահպանվում են հայերեն ձեռագրեր, որոնք թեև ուսումնասիրված են առանձին եվրոպացի հայագետների կողմից, սակայն հրատարակված ցուցակները հեռու են լիակատար և սպառիչ լինելուց։

Պարզ է, ուրեմն, որ հիշատակարանների հրատարակվող ժողովածուները այս կամ այն չափով թերի են և չեն ընդգրկում առկա բոլոր ձեռագրերը։ Սակայն, քանի որ միաժամանակ լույս են տեսնում նաև Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի «Հիշատակարան ձեռագրաց» մեծածավալ ժողովածուի հատորները, ուստի կարելի է հուսալ, որ այս երկու զուգահեռ հրատարակությունները մեծ չափով կարող են լրացնել միմյանց։

Լ. Խաչիկյանը ջանք չի խնայել, որպեսզի, որքան հնարավոր է, քիչ հիշատակարաններ դուրս մնան այս ժողովածուից։ Այդ նպատակով նա պրպտել է նաև մի քանի անտիպ ձեռագրաց ցուցակներ, որոնցից քաղել է զգալի թվով արժեքավոր հիշատակարաններ։

Հիշատակարանների քննադրերի հրատարակությունը կարելի է օրինակելի համարել։ Դրանք վերծանված և ընթերցված են ամենայն ուշադրությամբ և գիտական բարեխղճությամբ։ Նման քննադրերի հրատարակության ժամանակ, չափազանց կարևոր նշանակություն ունի ճշգրիտ կատարողության վերականգնումը, որը հնարավոր է միայն քննադրի մտքի ճիշտ ընկալման դեպքում։ Այս տեսակետից ևս գրախոսվող հատորը արժանի է դրվատանքի։ Կան միայն հատուկ կենտ վիճելի տեղեր, ինչպես, օրինակ, Մատենադարանի № 6862 ձեռագրի 1441 թ. հիշատակարանի այն հատվածում (էջ 514), որտեղ գրիչը նկարագրելով Ջհանշահի արշավանքը դեպի Վրաստան և Սամշվիլից քաղաքի ավերումը գրում է. «և յորժամ եկն ազգն Տաճկաց՝ փախստական եղեն ազգն Վրաց և մտան ի յԱփխազս, և մնաց ազգս Հայոց, որք եկեալ էին և բնակեալ ի Վրացտունս՝ ի ձեռն անաւրիւնաց...»։ Մեր կարծիքով, այստեղ սորք եկեալ էին և բնակեալ ի Վրացտունս՝ միջանկյալ նախադասություն է, հետևաբար վերջին բառից հետո՝ բուրի փոխարեն պետք է լինի ստորակետ։ Խոսքը այստեղ վերաբերում է Շահրուխի արշավանքների ժամանակ Վրաստան ապաստանած հայերին։

Իսկ Մատենադարանի № 4829 ձեռագրի 1444 թ. հիշատակարանի հետևյալ հատվածը. «և յորժամ և նոյն Թումայ վանից հաւր ձեռօքն նաչրադրնի վէցրու հողն արտ, ամիրաց մըլրաթըզթովն և նըշանովն՝ սուրբ Վարդանայ մուլք գընավ և...» էգին, և կաթողիկոսենց արտերն, և Պէշդէնի դրախտն՝ սուրբ Վարդանայ վանիցն մուլք, շինեցաւ և ձիթահանքն սուրբ Վար-

¹ Տես Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Երուսաղէմի սրբոյ Յակոբեանց վանքի, առաջին հատոր, կազմեց Արտավազդ արք. Սյուրմեյան, Վենետիկ, 1918, երկրորդ և երրորդ հատորներ, կազմեց Նորայր եպս. Պողարյան, Երուսաղեմ, 1933—1934։

² Տես Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատ. Ա և Բ, կազմեց Բարսեղ վ. Սարգիսյան, Վենետիկ, 1914—1924։

³ Տես Ծուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Հակովբոս վ. Տաշյան, Վիեննա, 1893։

* Բնագրում մեկ բառի տեղ ազատ է թողնված, որտեղ հավանաբար պետք է լիներ այդետիրոջ անունը։

դանայ, ի Գաւաշ դեաւդս», մենք կառաջարկեինք կետադրությունը փոխել և կարդալ այսպէս. «Կըտըրվաւ և նոյն Թումայ վանից հաւր ձեռօքն Նաջբաղընի վէցքու հողն արտ, ամիրաց մըլ-բաթըղթովն և նըշանովն, սուրբ Վարդանայ մուլք. դընաւ և... էդին և Կաթողիկոսնց արտերն և Պէշգէնի դրախտն՝ սուրբ Վարդանայ վանիցն մուլք. շինեցաւ և ձիթահանքն սուրբ Վարդանայ, ի Գաւաշ դեաւդս»:

Համառոտ և չափազանց ժլատ են ձեռագրերի ներկա վայրի և վիճակի մասին տրված տեղեկությունները: Կան հիշատակարաններ, որոնք թեև քաղված են Մատենադարանում պահվող ձեռագրերից, սակայն դրանք ժամանակին լույս են տեսել կամ ձեռագրաց ցուցակներում և կամ այլ ժողովածուներում և ուսումնասիրություններում: Այս դեպքում անշուշտ վատ չէր լինի նշել այդ մասին և ցույց տալ, թե ի՞նչ առիթներով և որտե՞ղ են լույս տեսել այդ հիշատակարանները: Դրանից աշխատությունը մեծ չափով կշահեր: Նախորդ հրատարակությունների մասնակի համեմատությունը ընկ. ի. Խաչիկյանի կազմած հատորներում հրատարակված բնագրերի հետ, թույլ է տալիս ասելու, որ հին հրատարակություններից շատերը աղավաղված են և կրճատված, ուստի և չեն կարող հավաստի սկզբնաղբյուրներ համարվել:

Այսպիսով, ժ՛ն դարի առաջին կեսի հայերեն ձեռագրերի հիշատակարանների այս ստվար հատորը ոչ միայն գալիս է վկայելու նրա հրատարակչի գիտական բարձր հատկանիշների և կատարած քրտնաջան աշխատանքի մասին, այլ այն միաժամանակ հանդիսանում է սովետահայ հայագիտության լուրջ նվաճումներից մեկը: Կասկածից դուրս է, որ նման արժեքավոր և լուրջ հրատարակությունները նոր թափ են հաղորդում հայագիտության զարգացմանը:

Վ. ՓԱՓԱԶՅԱՆ